ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2020 թվականի N 444– Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2019 թվականի դեկտեմբերի 10-ի N 488-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2020 թվականի դեկտեմբերի 24-ին ներկայացված N 45 արձանագրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից սույն թվականի սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետությունում զոհված Արթուր Ռաշիդի Ամիրաղյանի, Արմեն Միքայելի Օհանյանի, Թաթուլ Լավրենտի Ղազարյանի, Մանվել Սարգսի Գալստյանի, Մեսրոպ Վարդանի Հովհաննիսյանի, Արմեն Լևոնի Բրուտյանի և Ալեքսանդր Աշոտի Ազարյանի հուղարկավորման ծախսերի փոխհատուցման նպատակով փոխանցել՝ <<ԵԴԵՄ 1>> ՍՊԸ-ին 645 /վեց հարյուր քառասունհինգ/ հազար դրամ և <<ՀԱՅԿ ՍԱՐԴԱՐՅԱՆ>> ԱՁ-ին 370 /երեք հարյուր յոթանասուն/ հազար դրամ:

2. Մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

Недействительная подпись

X

2020թ. դեկտեմբերի 24
ք.Իջևան